ւատարիմ ու հաստատ մնաց իւր սուրբ կրօնի մէջ։

Այժմս զուտ Ուտիախօս Հայադաւան ժողովուրդներն են Վարդաշէն և Նիժ բազմամարդ գիւղաքաղաքները, որոնցից առաջինը 40—45 վերստ հեռաւորութեամբ գտնւում է Նուխու արևելեան կողմը և բաղկացած է 680 տուն ծխից, որից 300 տուն Հայադաւան, 200 տուն՝ հրէայ, 150 տուն յունադաւան *) և 30 տուն պարսիկ, որ պատկանում են Սուննի աղանդին։ Իսկ Նիժ գիւղաքաղաքը գտնւում է Նուխու հարաւ-արևելեան կողմը, 60—65 վերստ հեռաւորութեամբ, որի բնակիչների թիւը հասնում է 900 ընտանիքի, որոնցից 100 տուն թուրքեր և լէզգիներ են, իսկ մնացած 800 տունը՝ զուտ Հայադաւան Ուտիացիներ։ Թրքախօս Հայադաւան գիւղերն են Զոոլու,

---

*) Տես «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», երես 397, որի մէջ Զալալեան սրբազանը գրում է կրօնափոխ դարձած ուտիացիների մասին այսպէս։ ...«յորոց հարիւրն (100 տուն) Թողեալ զհայրենի կրօնս եղեն վրացիք ի վերջին ժամանակս ի հարստահարութենէ ումեմն ընչաքաղց եպիսկոպոսի, զորոյ անունն պատկառիմ ի գրել վասն մեծութեան աստիճանին, զոր յետոյ ընկալաւ։ Այդ ընչաքաղց և արծաթամոլ եպիսկոպոսը Յովհաննէս Կարբեցին էր, որ 1831 թ. ընտրուեց Կաթողիկոս ամենայն Հայոց։ Վստահելի և հաւատարիմ ծերունիներից ես լսել եմ, որ այդ անհաստես եկեղեցականը՝ ս. Էջմիածնի պարտքերը հատուցանելու նպատակով, երբոր գիւղացոց վերջին անասունը բռնութեամբ վաճառել է տալիս, զայրացած ու զզուած այս բանից, 100 տուն հայադաւան Ուտիացիք մտնում են Վրաց Եկեղեցու գիրկը։